

**Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐԱԷՆ**

ԵԿԵՂԵՑ ԱԿՈՒՔ - ԲԵՄ ԱԿՈՒՔ

● Կիր. 5 Հոկտ. — Բարեկ. Վարազայ Ա. Խաչի պահոց: Ա. Պատարագը՝ Ս. Յարութեան Տաճարի մեր թ. Գողգոթայի վերնայարկ մատրան մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Ռուշաւանութեամբ Գեր. Տ. Ռուրէն մատուցան:

● Ուր. 10 Հոկտ. — Երեկոյեան Ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակիլ պաշտըւցան Ս. Քաղաքիս Դպտոց Ա. Գէորգայ վանդքին մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Ռուրէն Ա. Արքեպս. Մանասեանի:

Համաձայն ընկալիեալ իրաւական կարգին և ըստ աւանդութեան, Միաբանութիւնս տարին մէկ հետ թափորով՝ Կերթայ Դպտոց Ա. Գէորգայ վանդքը, տօնախմբելու համար սուրբին յիշատակը:

● Եր. 11 Հոկտ. — Ա. Գերզայ զօրավարին: Ա. Պատարագը՝ Դպտոց Ա. Գէորգ Եկեղեցւոյն մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Վարուժան Արզ. Գապարանեան: Քարողեց Հոգ. Տ. Միւռոն Վրզ. Կրճիկեան, անդրադառնալով օրուայ սուրբին կեանքին ու գործունէութեան վրայ, ներկայացնելով զայն իրը քայլա հաւատացեալ մը: Յաւարա Ս. Պատարագի, Միաբանութիւնը պատուասիրութեցաւ Դպտոց Ա. Գէորգայ վանքի Հոգ. Տեսչէն: Հանդիսաւոր երթ ու զարձին կը նախագահէր Գեր. Տ. Ռուրէն Ա. Արքեպս. Մանասեան:

— Կ. կ. Ժամը 2.30ին, Գեր. Տեղապահ Աըրբազանը ի գլուխ Միաբանութեան, մուտք դորձեց Ս. Յարութեան Տաճար: «Հըշաշափառյի հանդիսաւոր մուտքէն և Ս. Գերեզմանի ուխտէն ետք, թ. Գողգոթայի վերնամատրան մէջ պաշտըւցան երեկոյեան Ժամերգութիւնն ու Վարագայ Խաչի մեծահանդէս նախատօնակիլ:

● Կիր. 12 Հոկտ. — Վարազայ Ա. Խաչ: Առաւոտեան Ժամը 5.30ին, Գեր. Տ. Ռուրէն Ս. Եպութէմհանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գողգոթայի վրայ ուխտի այցելութենէն ետք, մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ առաւոտեան Ժամերգութիւնը: Կարճ զաղարէ մը ետք, մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, Քրիստոնի Ս. Գերեզմանին վրայ: Պատարագեց Գեր. Տ. Ռուրէն Եպս. Քէմհանեան, և քարողեց, ըստարան ունենալով «Համբարձի զայս իմ ի լերինս, ուստի եկեղեց ինձ օգնութիւնս» պանծացնելով Վարագայ Խաչի տօնին Խորհուրդը, և ցոյց տալով Ս. Խաչը իրու օգնականը և լոյսը հայոց ազգին, զարերու փոթորկներու և ար-

հաւրալից պայքարներու խաւարին Ընդմէջէն: Դպրաց դասը, Գեր. Տ. Ռուրէն Արքեպս. ի ղեկավարութեամբ, կ'երգէր Եկմալեանի դաշնաւորած քառաձայն Ս. Պատարագը: Յաւարա Ս. Պատարագի, Միաբանութիւնն ու ժողովրդեան հոծքալմութիւնը, ինչպէս նաև Ս. Թ. Նախակրթարանի համայն աշակերտութիւնը, շքերթով վերադարձան Մայրավանք:

● Եր. 18 Հոկտ. — Ա. 72 աւակերտացն Քրիստոնի: Ս. Պատարագը՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի ներքին գաւթին մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Կիւրեղ Արզ. Գարիկեան:

● Կիր. 19 Հոկտ. — Ս. Պատարագը՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Օշական Արզ. Մինասեան:

● Ուր. 24 Հոկտ. — Երեկոյեան Ժամերգութիւնն ու Թարգմանչաց հանդիսաւոր նախատօնը պաշտըւցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Արարողաւթեանց կը նախագահէր Գեր. Տ. Ռուրէն Ա. Արքեպիսկ. Մանասեան:

● Եր. 25 Հոկտ. — Ա. Թարգմանչաց վարդապետացն մերց: Հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատոյց՝ ըստ Ընկալեալ սովորութեան, կիւրկէնկեան Մատենազարանի Տեսուչը՝ Հոգ. Տ. Անուշաւան Արեկայ Զղջանեան: Քարոզեց Հոգ. Տ. Հայկազոն Վրդ. Արքականեան, «Որ զերկաւոր մեծութիւն փառաց խաւար կոչեց ցին ընարանով: Յաւարա Ս. Պատարագի, Գեր. Տեսչապահ Արբազանին նախագահութեամբ, կատարուեցաւ տարեկան հանդիսաւոր հոգեհանգիստը, Ս. Աթոռոյ մեծ քարերար Քալուստ Ոչէ կիւրկէնկեանի ձնողաց, ինչպէս նաև նորոգ հանդ, տիկնոջ հոգուոցն ի հանդիսաւոր Ապա, Գեր. Տեղապահ Արբազանին անուան տօնը ըլլալով, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան, ուր հետզհետէ չնորհաւորութեան եկան նաև այլեւայլ ականաւոր ազգայիններ ու պետական բարձրաստիճան պաշտօնեաներ:

● Կիր. 26 Հոկտ. — Ս. Պատարագը՝ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Հայկազուն Վրզ. Արբազանեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ո Ւ Ք

● Կէ. 1 Հոկտ. — Առաւոտուն: Գեր. Տեղապահ Ա. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Ֆողովական Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Վարդապահ Վարժարանի 1952-53 տարեցըանին, Այս առթիւ Վարժարանի սրահին մէջ հաւաքուած աշակերտութեան քաջարեական խօսքեր ըրաւ և օրհնեց զանոնք իրենց յառաջ տանելիք աշխատանքներուն մէջ:

● Եր. 4 Հոկտ. — Կ. վ. ժամը 4 ին, Գեր. Տեղապահ Ա. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վ. Պ. Ասլանեանի և Տիար Կարպիս Հինդեանի, ընդառաջելով եղած հրաւերին, ներկայ գոնոսեցաւ American School of Oriental Researchի տնօրէնին կողմէ սարքուած ընդունելութեան, իրենց զգբոցական ներկայ տարեշրջանին բացման առթիւ Այցելութիւն տուաւ նաև Dr. Edwin Mall ի, Լուսերական Կազմակերպութեան Մեծաւորին, Augusta Victoria հիւանդանոցին մէջ:

● Կիր. 5 Հոկտ. — Կ. վ. ժամը 3 ին, Գեր. Տեղապահ Ա. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վ. Պ. Ասլանեանի, վանական գործերով մէկնեցաւ նոր երուսաղէմ և վերապարձաւ ԳՀ. 7 Հոկտ. ի Կ. վ. ժամը 3 ին:

● ԲՀ. 6 Հոկտ. — Առաւօտեան ժամը 8.30ին, ի զիմաց Գեր. Տեղապահ Ա. Հօր, Գեր. Տ. Սուրէն Ապս. Քէմհանեան, ընկերակցութեամբ Հոգ. Ժողովական Հայրերու, բացումը կատարեց Ժառ. Վարժ. ի և Բնծայարանի 1952-53 տարեշրջանին: Գեր. Արքազանը զգացուած՝ ճառ մը խօսեցաւ ժառանգաւոր սաներուն, անգամ մը ևս շեշտելով արժանաւոր մշակներու կարիքը Հայաստան-եաց Եկեղեցւոյ համար մանաւանդ այս օրերուն: Ապա Հոգ. Տ. Հայկազովն Վ. Պ. Արքահամեան, Նորընահիր տեսուչը Ժառ. Վարժ. ի և Բնծայարանի, Կարգաց Աւետարանի սերմանացանին առակը, յորմէ հետէ զասաւանդութիւնները սկսան ուսուցչական կազմին մէջ աւելցած նոր ուժերով:

● Կիր. 12 Հոկտ. — Երեկոյեան ժամը 7 ին, բաղաքիս Ալ-Զահրա պանդոկին մէջ Սպանիական Օրուայ Տօնին առթիւ սարքուած ընդունելութեան, ի զիմաց Տեղապահ Ա. Հօր, ներկայ զըստեցաւ Գեր. Տ. Սուրէն Ա. Ապս. Քէմհանեան, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վ. Պ. Ասլանեանի և Տիար Կարպիս Հինդեանի:

● Կիր. 19 Հոկտ. — Կ. վ. ժամը 3 ին, վանական գործերով քաղաքու ժամանեց Յոպէի Ցեսուչ Հոգ. Տ. Բարգէն Վ. Պ. Ապատեան և վերապարձաւ Ել. 23 Հոկտ. ին:

● Կիր. 26 Հոկտ. — Առաւօտեան ժամը 9 ին, քաղաքիս Յոյն-Կաթոլիկներու Բարեսիբցա Ընկերակցութեան Տան բացման առթիւ, ընդառաջելով հրաւերին, ի զիմաց Գեր. Տեղապահ Ա. Հօր, Հոգ. Տ. Պարզեն Վ. Պ. Վ. Բարգէն Կարպիս Հինդեան Պանուեցաւ գոհարանական Պատարագի մը և թէյասեղանի:

● ԳՀ. 28 Հոկտ. — Կ. ա. ժամը 9 ին, Գեր. Տեղապահ Ա. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վ. Պ. Ասլանեանի, վարչական գործերով մէկնեցաւ նոր երուսաղէմ և վերապարձաւ Աւր. 31 Հոկտ. ի Կ. վ. ժամը 3 ին:

## ՇՆՈՐՀԱԿՈՒԹԻՒՆ

Ենորհակալութեամբ սացած ենք, Ազն. Օր. Սիրափի Տէր Ներսկսեանի միջոցաւ, նետեալ նուերները մեր Ձեռագրաց Ցուցակի տպագրութեան ծախուց հաւողին.

Տ. Պ. Էն տուար 283  
Տիկ. Լիպմանն » 50

Տեսուչ Ձեռագրատան Ա. Յակոբեանց  
ՆՈՐԱՅԻ ԵՊՈՒ

## ԼՅՈՅ ՏԵՍՈՒԻ

# ՕՐԱՑՈՅՑ

## 1953

### ՓՈԽԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՆԻ

(ՀԱՅ ՀԻՆ ՏՈՍՐԻ)

ԵՒ

ԲՈՒՆ ԲՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ՏԵԽԵՑ - ՏԵԽԵՑ = 4445 - 4446

ԵՒ

ՏՈՄԱՐԱԿԱՆ ԲՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ՊԵԽ - Պ.Ե.Կ = 1402 - 1403

ԵՐՈՒՍԱԼԵՄ

ՏԱԿՐԱՆ ՄՐՈՑ ՎԱԿՈՐԵԱՆՑ

ԵՀ. 208

ԳԻՐ. 100 Ֆիլս

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem  
Editor - Father Zaven Chinchinian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.